

ԳԻՐԳ ՄԱՅՅՈՒԳՈՅ

Ը Ս Տ

ՀՆԱԳՈՅՆ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ Գրիգոր Խալաթեանց՝ գրոցս այս առաջին հրատարակութեամբ՝ Սուրբ Գրոց Հայ Թարգմանութեան հարուստ գանձարանին մէջ՝ գեղեցիկ գարդ մ'ալ աւելցուց։ Հրատարակիչն կը պատմէ ի յառաջաբանին՝ հետեւեալ բարբառով պատահումք։ «1896 թ. ամառը՝ զբաղուելով երեք շաբաթի չափ Ս. Էջմիածնի մասնապարսնում, և նիւթեր ժողովելով Մովսէս Խորենացու պատմութեան վերաբերեալ հրկրորդ հետազոտութեանս համար. . . գտայ բազմաթիւ զեպարածով՝ ժեպարու մի գրչագիր, Աստուածաշնչի մէջ մինչև այսօր բնու անծանօթ և սովորական Հայ Թարգմանութիւնից բարբառովն տարբեր՝ մի այլ բարգմանութիւն, և այն՝ միայն Ա. և Բ. Մնացորդաց Գրքերի մէջ պահուած»։ Սակայն, ինչպէս ինքն իսկ կը վկայէ, կանոն քան զինքն այլոց աչքէն ալ չէր վրիպած այդ. վասն զի անոր հանդիպեր էին Ս. Էջմիածնի միւսրան Հ. Եղիս, և զեռ աւելի առաջ 1773ին, յերուսաղէմ, Ս. Յակովբայ վանքին մէջ, Սարգիս վարդ. Հանցի. որ այսպէս կը գրէ. «Առաջին և Երկրորդ Մնացորդաց գիրքն յամենից տարածայն գտանցան». — սակայն իրենց այս բարբառով հանդիպումն ապարդիւն մնացեր էր ցարդ։

Իսկ Մազ. Խալաթեանց երբ այս նոր գիւտն ըբաւ՝ փութաց ծանօթացրնել Արարատ ամապրի (1896) յուլիսի պրապին մէջ մի քանի հատուած հրատարակե-

լով, զեմ առ զեմ գնելով այս և սովորական հայ Թարգմանութիւնը։ Եւ այս հրատարակութեան միջոցաւ իմացաւ, թէ իւր յէջմիածին գտած զբազարէն աւելի ընտիրն կար յերուսաղէմ, զոր ապա ընտրեց իբր բնագիր իւր ներկայ հրատարակութեան։

Անշուշտ Մազ. Խալաթեանց պիտի ներէ մեզի համոտօտ քննական ակնարկ մը ձգելու իւր այս գեղեցիկ և ընտիր հրատարակութեան վրայ, զոր ամէն բանասէր կը գնահատէ արժանապէս։

Խալաթեանց այս նոր Թարգմանութիւնը մերթ ասորեղենէ եղած կը համարէ¹, իբր բնկոր մը այն հնագոյն կամ նախնական Թարգմանութեան՝ զոր կը յիշէ կորին, մերթ ալ շատ մերձաւոր կը գտնէ Երբայականին²։ Իսկ իրեն բուն սեփական կարծիքն է՝ թէ Փշխատայի վրայէն եղած ըլլայ այդ Թարգմանութիւնը, և Փշխատայի համար ալ կ'ըսէ թէ «Այլալտացաւ, նորա տեղը յաջորդելով Յունականից կամ Եթովպականից Աորի Թարգմանութիւնն ճիշտ այնպէս, ինչպէս պատահեց հայերէն Աստուածաշնչին»։ զոր և կը յօսայ վերականգնել այս նորագիւտ Թարգմանութեամբ³։ Բայց Մեծ. Խալաթեանցի Փշխմոյի անշարտանալոյ մասին ըբած գատաստանը թուի թէ հակառակ կ'ելլէ ընդհանուր բանասիրաց կարծեաց. վասն զի, ինչպէս նաեւ կը հաստատեն Félix Nève, Abbé Martin, և այլն, մինչև ցայսօր այս Թարգմանութիւն ամենէն աւելի տարածուածն է, եթէ ոչ միակ գործածականը, այն ամէն բրիտանոնայ ազգաց մէջ՝ որոց ծիսական լեզուն արամական է⁴, այնպէս որ նոր ամբողջական հրատարակութեան մը ձեռնարկելու փոյժն ունեցած են բանասէրք։ Իբրաւ է՝ որ եղած են արարակուսողներ, թէ արդեօք ժամանակաւ փոփոխութիւններ կրնան է փշխմոյ, սակայն փշխմոյ երբեք ենթակայ եղած չէ վերստին քննութեան՝ նման լատին

pour l'étude de l'antiquité chrétienne en Orient, էջ 51-59. Louvain. 1882. — Հմտ. J. Roges: Reasons why a new edition of the Peshito, or ancient syriac version of the O. T. etc. Oxford.

1. Ի Յառաջաբանին, էջ Ա.
 2. Անդ, էջ Է. Ը. Ժ.
 3. Անդ, էջ Ժ.
 4. Introduction à la critique textuelle du N. T. էջ 108: — Revue des sources nouvelles

Հին Թարգմանութեան՝ զոր Գ. զարուն մէջ կատարեց Ս. Հերոնիմոս, կամ մեր Հայկա-կանին. այլ ունի երեք այլեայլ և իրարմէ տարբեր թարգմանութիւններ, որք են Փիլ-յորքենեան, Գիւրթիմոսի և Երուսաղիմի Գար-ձեալ, Փէշիթոյի Համար մեր ըսածը կը հաս-տատեն ամենէն Հին ձեռագիրներն և ամէն առօրի Հեղինակներ, մեկնիչներ և պատ-միչներ:

Իսկ նորագիւտ Հայ թարգմանութեանս մասին կը համաձայնինք Մեծ. Խալա-թեանցի, Համարելով զայն իբրև մասն մեր Հին թարգմանութեան. վասն զի Ե. զարէն վերջ ոչ մի յիշատակութիւն կը գտնենք Ս. Գրոց Հին կտակարանի Համար ուրիշ թարգ-մանութեան մը ձեռնարկութեան: Սակայն կարող շնքը որոշել, զէթ առ այժմ, նախ՝ թէ այդ նորագիւտ թարգմանութիւնն ինչ բնագրէ եղած է, և երկրորդ՝ թէ ինչպէս կարելի է բացատրել ընթերցուածոց այն ամէն տարբերութիւնները՝ որովք մեզ կը ներկայանայ այն — Ի՞նչ աւելի պարզեք ըսածնիս:

Ի մեզ Սուրբ Գրոց երեք թարգմանու-թիւնք եղած կը համարուին, առաջին՝ ասո-րերէն Փէշիթոյի վրայէն, երկրորդ՝ Եօթա-նասնից յոճարենէն, և երրորդ, թէ չհա-մարինք ամբողջական թարգմանութիւն մը՝ բայց կրկին ձուլում մը կամ սրբագրու-թիւն՝ Եփեսոսի ժողովքէն քիչ վերջ կոս-տանդնուպոսէն եկած օրինակաց, և ան-միջապալս յետոյ աղեքսանդրեան ձեռագրոց վրայէն: Արդ, այս երրորդ թարգմանութեան

իբրև բնագիր ունեցան մեր թարգմանիչք, ինչպէս որ կը կարծուի, այն յիսուն զբա-ղիրներէն մին՝¹ զորս Եւսեբիոս Կեսարացի օրինակել տուած կը Կոստանդիանու հրա-մանաւ, Հոովմական կայսրութեան զլիաւոր եկեղեցեաց համար. և այլ՝ արդիւնք կը Ու-րոզինեայ բաղլատութեանց, որոց աստե-ղանշաններն կը կրեն նոյն իսկ հայերէն ձեռագիրքը՝:

Յայտնի է թէ մեր նախնիք ամէն ինչ զոհեցին Սուրբ Գրոց բնագիր թարգմանու-թիւն մը ձեռք բերելու համար. և յիբաւի, Աստուածաշունչը մեր մատենագրութեան զուրկ գործոցն, ոսկեղէն դարու փառքն է. մեր եկեղեցւոյ ամենէն աւելի պաշտելի վե-հագեցաց վերջին ձիգն է: Կարելի չէր՝ որ զոհ ըլլային նոցա սոսկ թարգմանութեամբ, — խորհուրդ հարցուցին ամէն լեզուաց և ուղեցին պարփակել զանոնք Հայկականին մէջ: Երկրորդ պիտի ըլլար՝ եթէ ի վկայու-թիւն բերէինք մեր Ե. զարու պատմաց խօսքերն. յիշենք միայն առօրի մեծ Հեղի-նակին, Քար — Հերբէստի, ըսածն (ժ.Բ. զար). երբ մեկնելով ժէ 1 սաղմուք (ժ.Ձ, ըստ Եբր. և Փէշիթ.) պիտի կու տայ, թէ Սիւմ-մաքոս կը կարդար. « Ոչ գոն ինչ քարիք՝ առանց քո »: « Հայերէնը, կը շարունակէ նա, առօրի թարգմանութեան (Փէշիթոյ) նման է. « Քարիք իմ ինչ ի քե՛ն են »: Աստի կը Հե-տեւի որ Հայք յետ թարգմանելու (զՍ. Գիրս) յոճարենի վրայէն, բաղլատեցին առօրերե-նի հետ, և տեղ տեղ Փէշիթոյի բնթեր-ցուածներն ընդունեցան՝³ : Եւսեբի մեկնիչը

1. Աւերի անգամ՝ մեր նախնեաց ընտրած բնագրի մասին պիտի խօսինք՝ առիթ առնելով վերջերս հրատարակուած Eronitի բանակո-սութիւնը:

2. Կոնիքեր Խաւելով Ս. Գրոց Պատմութեան օրինակին վրայ. « Թէ Հայերը Արողիներ սուրբ զրոց զազափարը ձեռուրնին ունենին՝ անտա-բակայս է. վասն զի կը գտնենք իրենց Աս-տուածաշնչին մէջ Արողիներ նշանները նոյն-պէս Աղեղաւայ և Սիմաքոսի լուսանցից մէջ եղած խօսքերն՝ ելած են Արողիներ օրինակէն: (Քաղզ. 1895. էջ 265):

3. Եւսեբի է թէ Եւսեբի սաղմուն ունի տար-բեր թարգմանութիւն ալ, որ Եօթնասնեցեցն է. « Եւ քարիք իմ չեն քեզ ինչ պիտայ » Եւ տնն ձգածոն յսո օ՛՛ չբճաւն ձից: Արերնն ստոյգ է որ կրկին թարգմանութիւն ունեցած ենք Սաղմու-աց, ինչպէս որ Լատինք եւս, մին Փէշիթոյի վրայէն և միւսն Եօթնասնեցից: — Բազմահմուտ Հ. Ա. Սուրբեան զիտական հատուածի մը մէջ Ս. Գրոց վրայ (Բզվ. 1877, էջ 210) Հետեւեալն կ'աւանդէ. « Ի լուսանցս (ձեռագրոց) կը նշա-նակուին... երբեմն նաեւ Աղեղաւայս և Սիմա-քոսի և Փէշոստիսի թարգմանութիւնները և

իր Գանձարան խորհրդոց գրքին մէջ՝ նման գետադուծիւններ կ'ընէ, այնպէս որ հայկա- կան թարգմանութեան այժմեան բնագիրն կը համապատասխանէ ճիշտ մեր պատմը- շաց ըսածներուն, յորոց մենք պէտք էինք հետեւցընել այս թարգմանութիւնը: Մի և նոյն անձինք չկին կրնար կրկին անգամ թարգմանել Սուրբ Գիրքը՝ երկու այնպէս տարբեր բնագրաց վրայէն, ինչպիսիք են փէշիմոն և Եօթմանանիցը, բայց եթէ այդ երկու բնագրաց մէջէն ընտրելագոյնները բա- զելով և այդպէս իրենց թարգմանութիւնը ամբողջացրնելով:

Մինչեւ ցարդ, կարելի է ըսել, սաոյգ չէինք գիտեր՝ թէ ինչ էր այն էական տար- բերութիւնը՝ որ Ե. գարուն կիսուն մէջ կա-

տարունած երեք այս թարգմանութիւնները իրարմէ կը զանազանէին. որովհետեւ ոչինչ հասած էր մեր ձեռքը, կամ թէ հասեր էր՝ բայց չէր նշանատր մաս մը, այն ստաշին երկու թարգմանութիւններէն. վասն զի, եթէ կային հետքեր՝, բայց չունէինք ապահով անցքեր, զորս կարելի ըլլար բնծայել այն ստաշին երկու թարգմանութիւններէն միոյն. բայց նորագիւտ Միացորդաց Գիրքն պարզեց զայս ամենայն. Եւ անհուն անընդուն մը կը նկատենք այս ցրոց՝ հայերէն երկու թարգ- մանութեանց մէջ, երբ զմ' առ զմ' կը գնենք ու կը բազդատենք զանոնք, որոյ փաբերի որինակ մ'ըլլան հետեւեալ համեմատական սիւնակներն (Ու. Միաց. ԺԱ):

Ա Ս Ո Ր Ա Վ Ա Ն

11. Այս են թիւք որանցն Գուժի. զուտ- ջին տեղին ունէր՝ զուսի արանց երեսնից, Գէղէնու արիագոյնն. սա ձգեաց ստաւը, զե- բեհարիւր արտ ի միւսմ ժամու ստաակեաց:

12. Յետ սորա էր իշէազար որդի հորեղբոր նորա, ի քաղաքէն Գահուճ, սա էր իշխան ս- րանցն երեք հարիւրաց:

13. Յորժամ էր ընդ Գուժի ի Փառի շուրջնս սոր այլազգեք տային պատերազմի և անդ էր ազարակ վարեալ գարեաւ, և ժողովուրդն փա- խուցեալ էր յերեսաց այլազգեացն:

14. Եւ կացին ի մէջ ազարակին և պահցին զնա. սպանեալ զայլազգիսն. և ետ Տէր յազ- թութիւն մեծ:

Ե Բ Բ Յ Յ Ա Վ Ա Ն

11. Եւ այս թիւ գորաւորացն Գուժի. Եղ- շամ որդի Աբումանի՝ իշխան ի մէջ երեսնից. սա վերացոյց զնիզակն իւր ի վերայ երեհհա- իւր վերաւորացն միանգամայն:

12. Իւ յետ նորա Եղէազար որդի հորեղբոր նորա՝ Աբուբացի, սր էր յերես գորաւորսն:

13. Սա եղև ընդ Գուժայ յԱխա զ'ամիմ. մինչ այլազգեք ժողովեցան (ի տեղւոյ) անդ ի պատերազմ: Եւ էր ազարակ երկրին այնու- թիկ լի գարեաւ. և փախեաւ ժողովուրդն յե- բեսաց այլազգեացն:

14. Կացին սոքա ի մէջ ազարակին և պաշա- պանեցին նմա: Իւ իբրև հարին զայլազգեան՝ ետ Տէր վրկութիւն մեծ ժողովրդեան իւրոյ:

անոց զորժամած բռնեք» . և ի ծանօթու- թեան. « Այս զանազան թարգմանութեանց օ- թինակ մը ունինք և Ղազար Փարպ. 114. սոր յէջելով թՋ սալմուսին տող մը, կ'ըսէ « Յագե- ցան կերակուր, որ միւս եւս քաղցմանի՝ խո- զնկեան ասե, և քողիմ զմնացոսած տղայոց խորանց » . ո՛ է այդ միւս թարգմանիւն. յու- նակուն բառին մէկ զրի տարբերութենէ առաջ եկած զանազանութիւն մ'է: զոր կը գտնենք նաեւ ի Ս. Օգոստինոս. յԱնտրոնոս և ի Հու- մայական Սաղմոսարան, և յԱզգայնարիտի մեկնութեան » :

սիկներէն է Մարկ. ԹԱ 9-20 համարներուն կրկին թարգմանութիւնքը, զորս ժամանակաւ (Քզմ. 1877, էջ 212) յրատարակած է Հ. Ա. Սուքրեան: Abbé Martin մեծ հատոր մը նուր- թելով Մարկոսի թՋ զլիւսոյն այս անցից աւել տարանք մաս կազմելուս կամ ոչ, կը յիշէ երկու թարգմանութիւններն ալ, և այդ նոր պատասխիկը, զոր հնագոյն կ'անուանէ: Փէշի- թոյի՝ ասորի բնագրին վրայէն չի կոնար եղած ըլլալ կ'ապացուցանէ, այլ յունարեանէ: (In- troduction à la critique textuelle du N. T. Հա. Բ. էջ 328-329):

1. Մեզ մինչև ցարդ ծանօթ եկած պատա-

15. Յետ այսորիկ յիջանեւ երէք ի զօրաւու-
րացն առ Դաւիթ ի բարաբրն Արլամ, մինչ բա-
նակք այլազգեացն բանակեալ էին ի հովտին
սկայից :

16. Եւ Դաւիթ բնակէր ի Խորանի, և զօր
այլազգեացն ի Բեթղեհէմ :

17. Յանկացեալ Դաւիթ առէ. օ՛ր թէ մատու-
ցանէր ոք ինձ ի ջրոյ զոր արբի ի մեծէ ջրհո-
րոյ անտի Բեթղեհէմի՝ որ առ զբան քաղաքին :

18. Եւ վաղվազակի զայն լուեալ երեցունց
արանցն այնոցիկ, պատասեցին և մտին ի բա-
նակն այլազգեաց, և անցեալ հանին ջուր ի
մեծէ ջրհորոյ անտի որ էր ի Բեթղեհէմ առ
զբան քաղաքին, և առեալ բերին և ընծայեցին
Դաւիթի, որ սուկայն ոչ կամեցաւ ըմպել զայն,
այլ եհեղ զայն առաջի Տեառն :

19. Եւ առէ. քաւ լիցի ինձ, Տէր, եթէ արա-
րից զբանդ զայդ առաջի Աստուծոյ իմոյ. արքո
այսոքիկ ի զուրս վազեցին, ի կշիռ եղեալ զա-
րին պարանոցի իւրեանց. և ոչ կամեցաւ ըմ-
պել զայն. զայս արարին երեք զորաւորքն
այնոքիկ :

Ե Օ Ք Ա Ն Ա Ս Ն Ի Տ

11. Եւ այս թիւ զօրաւորացն Դաւիթ. Խզ-
բաւամ¹ որդի Աբամանի, առաջին յերիցն², նա
ձգեաց զսուրն իւր միանգամայն ի վերայ ե-
րեքհարիւր վիրաւորացն՝ ի միւսմ ժամանակի :

12. Եւ յետ նորս Եղէազար որդի Դովդայի
արքուքացւոյ. նա յերիս զօրաւորան :

13. Եր ընդ Դաւթայ ի փասասողովին⁴ : Եւ
այլազգիքն ժողովեցան անգր ի պատերազմ. և
էր մասն ինչ անդառտանին լի զարեաւ, և
զօրն⁵ փախեաւ յերեսաց այլազգեացն :

14. Եւ եկաց ի մէջ մտինն և պահեաց զնա.
և հարին զայլազգիսն. և արար Տէր փրկու-
թիւն մեծ :

15. Եւ իջին երեք յերեսուն իշխանացն ի

15. Եւ իջին երեք յերեսուն իշխանացն ի
վէճն յորում էր Դաւիթ յայրն Ողորմայ, մինչ,
այլազգիք բանակեալ էին ի հովտին Թափայիմ :

16. Արդ Դաւիթ էր ի պահակս. և բանակ
այլազգեացն ի Բեթղեհէմ :

17. Եւ ցանկացաւ Դաւիթ, և ջուր, առէ.
օ՛ր ապր ինձ ջուր ի ջրհորոյն Բեթղեհէմի՝ որ
է առ զբանն :

18. Եւ երեքն այնոքիկ անցին ընդ բանակն
այլազգեաց և հանին ջուր ի ջրհորոյն Բեթ-
ղեհէմի, որ էր առ զբանն, և բերին առ Դա-
ւիթ ըմպել : Որ ոչ կամեցաւ, այլ մտնաւանդ
նուիրեաց զայն Տեառն :

19. Ասելով. Բաւ լիցի ինձ զի առաջի Աս-
տուծոյ իմոյ արարից զբանդ զայդ, և զարին
արանցը այդոցիկ արբից, վասն զի ոչուվքն
իւրեանց բերին ինձ ջուր : Եւ վասն այսորիկ
ոչ կամեցաւ ըմպել : Չայս արարին երեք զօ-
րաւորքն :

ՆՈՐԱԿԻՆՏ ՔԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

11. Եւ այս թիւք են զարաւորացն Դաւիթ.
Յետէբան որդի Քառանայ առաջի քան զերիսն,
սա սուսեր ի վեր առեալ ընդիսանէր ի մէջ
ինն հարիւր³ յարձակելոցն միանգամայն :

12. Եւ յետ նորս Եղէազար որդի Ռոտե
հարեզարն նորուն. և սա էր յերից անտի
հարս որ ընդ Դաւթին իսկ էր ի Սեպան :

13. Եւ այլազգիքն ժողովեալ էին ի զործ
պատերազմի. և անդ էր երկիր մի յազարակի
վարեալ լի ոսպմբ, և զունդն Դաւթեան ի
փախուստ զառնայր յերեսացն այլազգեաց :

14. Եւ նա առեալ ունէր զտեղին ի մէջ
երկիր վիճակայն, և երկիրն ապրեցուցանէր
և զայլազգիսն վանէր, և առնէր փրկութիւն
մեծ ի ձեռն Տեառն՝ ժողովրդեանն ամենայնի :

15. Եւ իջին երեք ոմանք յերից քնդից ան.

1. Ըսա Եօթ. Յետէբադ Դεσβαδδε.
2. Ըսա Եօթ. « երեսնից » τριαντα. մերն
գուցէ համաձայն Քաղ. « իշխան երբր մա-
սինն » :
3. Քաղաւորութեանց Գրքին մէջ. « ութհա-
րիւրոց » :
4. Ըսա Եօթ. « Փասողովին ». իսկ ասորե-
բն Փասթ = վիճակ, փաս, ա՛ մայս = շարք. Թա-
ղաւորութեանց մէջ կը զնէ « ի ծնուն » :
5. Ըսա Եօթ. « ժողովաբուն » δ λαός, համա-
ձայն այլոց :

4. Ըսա Եօթ. « Փասողովին ». իսկ ասորե-
բն Փասթ = վիճակ, փաս, ա՛ մայս = շարք. Թա-
ղաւորութեանց մէջ կը զնէ « ի ծնուն » :
5. Ըսա Եօթ. « ժողովաբուն » δ λαός, համա-
ձայն այլոց :

վէճն առ Գաւիթի, յայրն Որդուճայ: Եւ բանակ
այլազգեացն էր բանակեալ ի հովտին սկայեց:

16. Եւ Գաւիթ յայնժամ էր յամրոցին . և
զօր՝ այլազգեացն էր յայնժամ ի Բեթղզահէմ:

17. Եւ ցանկացաւ Գաւիթ և առէ . ո՛ր ար-
բուցանէր ինձ ջուր ի ջրհորոյն Բեթղզահէմի .
որ էր առ դրանն:

18. Եւ պատասեցին երէք՝ զբանակ այլազ-
գեացն, և հանին ջուր ի ջրհորոյն Բեթղզահէ-
մի, որ է առ դրանն, և առին և եկին առ Գա-
ւիթ. և ոչ կամեցաւ Գաւիթ ըմպել զայն, և
նստիբեաց զայն Տեառն:

19. Եւ առէ . քաւիչ լիցի ինձ Աստուած առ
նել զբանիչ զայդ, եթէ զարիւն արանցդ այգո-
ցիկ արբից յանձինն իւրեանց . վասն զի ոգ-
ւովքն իւրեանց բերին զայդ: Եւ ոչ կամեցաւ
ըմպել զայն: Զայս արարել է երեք զօրուորքն:

Բազմատուծեանս ասորական և եբրայա-
կան մասերը թարգմանեցինք Վալդսնի Սուրբ
Գրոց հրատարակութենէն. իսկ Եօթնասու-
նից յունարէն բնագրին մեր թարգմանու-
թենէն ունեցած ինչ ինչ փոքրիկ տար-
բերութիւնքը՝ զոչացանք ի ստորև ծանօ-
թութեանքը նշանակելով: Կարելի էր յաւելոյլ
ստանց վրայ հինգերորդ սինդակ մ'ալ, այն
է Բ. Թագաւորութեանց ԻԳ. դ. 8—18 հա-
մարները, ուր դրեթէ բառ առ բառ նոյն
դիպուածները կը պատմուին, և որով նո-
րագիտ թարգմանութեանս ասորերութիւնքը
քիչ մը լուսաւորել . այսպէս, օրինակ իմն,
մինչ այլ թարգմանութիւնք համաձայն մե-
րինին կը գտնեն, «Անպատան լի գարեառ»
(13), նորագիտ Մնացորդաց Գիրքն հա-
մեմատ Թագաւորութեանց գրոց ունի «լի
ասպանք»:

Հուսկ յիշենք նաեւ հետեւեալ եօթն բա-
ռերը՝ զորո Մեծ. խալթեանց կը ներկա-

տի, զի էր Գաւիթ յայրի անշ վեմին Որդուճայ,
և զունչք այլազգեաց պատրաստեալ ի պա-
տերազմ ի հովտին Տեառանայ:

16. Եւ Գաւիթ յայնժամ արգելեալ էր ի
ներքօ. և զունչքն այլազգեաց պատեալ էին
ջուրը զհովտանն Բեթղզէմ:

17. Եւ ցանկանալով տենջացաւ Գաւիթ և ա-
ռէ. լինէր ոք որ զայր բերէր ինձ ջուր ի Բեթ-
ղզահէմի ջրհորէ անտի՛ որ մերձ առ դրանն է:

18. Եւ անգէն վաղվազակի երեքն յարձա-
կեցան ի վերայ զնոյնն այլազգեաց և գունչպն
պատասեցին, և ջուր տուեալ բերին ի ջրհորէ
անտի ի Բեթղզահէմ, որ էր մերձ առ դրանն:
Եւ առեալ³ Գաւիթ ոչ կամեցաւ ըմպել ի ջրոյ
անտի, այլ զոհէր զնա առաջի Տեառն իբր ի
նուէրս պատարագաց, և ասեր:

19. Քաւ լիցի ինձ, եթէ արարեց զբանիչ
զայդ, եթէ յարիւն արանցդ այգոցիկ ի փո-
խանակել զոգիս իւրեանց ընդ ջրոյդ, եթէ ար-
բից ես այսր: Զայս այն երեքն արարին:

յացընէ ի յառաջբանին, բսելով «Ոչ պակաս
արժանի են ուշադրութեան և մի շարք նախ-
նական հին զրականութեան մէջ մինչև այսօր
գեո չը պատահած բառեր. (գլթ ըստ Հվդ.
բարն) որ. բերանակարիչտ (Բ. Մն. թ. 4)
որ համապատասխան է Եօթնասունից թարգ-
մանութեան «մատուակ» բառին. — զվժեալ
(Բ. Մն. ի՛. 2) ըստ Եօթ. թրգմ. «ա-
պականեալ». երեւի՛ միծ (տիդն, ադա)
բառի հետ առնչութիւն ունի. — ռոնքեռեայս
(Բ. Մն. Ե. 9) ըստ Եօթ. թրգ. «եյս» (մեծ
տօնի կամ ժողովի իմաստով), — պատ-
գարնել (Բ. Մն. ԺԳ. 20) Եօթ. թրգ. «և
ոչ ես զոյր զօրութիւն». — քարապսակ (Բ.
Մն. իԵ. 12) Եօթ. թրգ. «զուրս քարան-
ձաւի». — քակըով (Ա. Մն. իԲ. 20) Եօթ.
թրգ. «սրահ». — քեփոռք (Ա. Մն. իԲ. 17)
բուն եբրայական բառ. Եօթ. թրգ. ունի այս
տեղ «տաշտ» և «բաժակ»: — Մեներ այս բա-
ռերէն երկուքը միայն կարող եղանք լու-

1. Ըստ Եօթ. «բանակ» սօստիլա.
2. Լուսազոյն էր որոշել զնելով երեքն:

3. Նորագիտ Թարգմանութեան մէջ յայտնի
կը տեսնուի թէ՛ կը պակսի տող մը:

սարանել. առաջինը «զմեայ» գտանք Մեծ. Վ. Հ. Արիշան Վ.ի Առեան բառարանի ձեռագիր յաւելուածոց մէջ նշանակուած՝ զմեայ օգր (Ոսկ. Մեկ.), զբժեայ = արամեայ. (Հին բառոցք). երկրորդը «բազրով» որ յունարէնի մէջ ըստ Եօթանասնից կը համապատասխանէ Ζακχὼ բառին, և նոյն անցքը կը պակտի երբայականին և ասորականին մէջ. ինչպէս նաեւ «բիտոր» բառին յուն. κροτορὸς բառն գրուած:

Ուզելով կնքել մեր այս սուղ խորհրդածութիւնքը, կը հետեւցնեմ թէ որչափ ծանօթ ըլլան մեզ Մնացորդաց այս նոր Գրոց զանազանութիւնքն, նոյնչափ այ անծանօթ է իւր ընագիրն ոսկից եղած է այս թարգմանութիւնս. սակայն երկար և մանրակրկիտ ըընտութեան բովոց մէջ՝ զիւրաւ պիտի լուծուին այս և ուրիշ գծուարութիւնք, զոր ընդ առաջ պիտի հանէ ուսումնասիրելու այնքան կարօտ և արեանի այս Գիրքս:

Ն. Բ. ԶՐԱԳԵԱՆ

ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԷՏԿԱՐ ԶԱՅԻՆ

Պ. Էտար Եասին Փարիզու ալգային սոյն նկարիչներէն է որ Հայուն գեղարուեստին վրայ օտարին լուս զարդար կը ներշնչեն. ու անոց մէջ Պ. Եասինը ըստ իւր մասնաճիւղին ամենէն առաջինն է: Տակաւին պատանի մ'է հասակաւ. բայց ըտիպա՞նս իւր արհեստին մէջ. օր աւուր վրայ կը հուսկուի գնահատել նկարիչ. ու Փարիզու մամուլը անդադար սկսած է անոր վրայ զրուատիք կարդալ: Պ. Եասին «Բէքլամ նեերէն կը փախէ ու կը թողու որ գործն շինքը հոչակէ. ու կը հուսկուի: Քաղկեդոնի Միթիթարեան վարժարանի աշակերտներէն է. նոյն իսկ նախակրթական դասնիթայքին մէջ, իր արտադրած ուրուագիծ գիմանկարներով վարժապետաց ու շարժութիւնը կը գրասէր

ու շարժունք կը պատճառէր: Փոքր հասակէն կը խոստանար մեծ ապագայ, որուն երեւումը սկսած է ներկայիս: Մենք չենք միայն անոր գործոց սքանչաշուշ այլ Եւրոպայի մամուլը, որ գեղարուեստի նրբացած ու կատարելագործուած ճարտարութեան՝ շատ ծանօթ է, ու նոյն արուեստին նախորդած ամենէն ձեռնհաս ու անհաւաք ընդառատ փարիզեան Լա Ռոպինտ Գրահանգէտը (1900 յունուար 15) Պ. Եասինի գործերուն շեւեւեալ ուսումնասիրութիւնը կը հրատարակէ:

ԻՄԲ.



ԱՆԵ տարի առաջ, վննեակէն Փարիզ հասաւ, ոգեւորուած՝ արեւելեան անոյշ անգործութիւններու, խեղճուկ կամ փառահեղ հրշանիկ ծաղւթիւններու, իտալական պերճանքի, մեռեալ քաղաքականութեանց նսմ՝ գեղեցկութիւններու և երբեմն յգացուած զուլն-գործոցներու, գանձեր, անշարժ ու խանգալաւ շքեղութեանց ցնորքներով Հայ մը, Պ. Էտար Եասին: Այս Հայը գնաց բնակելու, Գիշի հրապարակին մէջ, ծանօթ ալիպախից թաղին կնիրոնը, և մտածկոտ, զուլճը մեծ արուեստանոցի ապակափեղկին առջեւ, մտիկ ըրաւ կառքերու շառաչիւնին որ կարծես վեր կը բարձրանար անհուն մեքենայէ մը, հետեւեցաւ համակերպուած ամբոխներու հօտին՝ զոր համայնակառքերու զանդաղաշար, ժութիւնը կը քաշէ իր ետեւէն, զիմաստուերներուն՝ զոր զուրս կը ժայթքեն ձոխ, ջուրակուած, սակեզո կրպակները: Ամբոխը, անընդհատ գօտի, կ'անցնէր միշտ՝ գորշ, անպոյն, բազմապիսի: Մեծ ճամբուն զուլճը, խափանուած սրճարաններու զարատափին ժխորովը, փողոցները կ'երկնան՝ ուղիղ և աղտոտ, ծառուղիները կը սկսին, գօտտ, եղերուած սեւ ծառերով, թրջած, ճոզած, ուր կը տողաշարուի մերթ ատնալանտոի մը տաք աղտը. կիններ կ'անցնին հանգրիմած շրջազգեստներով, ցնցոտաւոր աղքատներ կը թափառին ամութեանը, բոնտակիր կամ կռուածիկ մարդեր կը տաժանին վատապարհկ, Զգաստ և անգինով, հոգին յուզուած հիացման, զթմութեան և զգացած հրապոյրի անակնկալ կրքերու խանակուածութեամբ մը, օտարականք կը նայի և տեսնելու չի վար-